Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02-2011
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

2011 թվականի ապրիլի 18-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հիմնադիր և միակ բաժնետեր Վարդան Սիրմաքեսը (11670 ձայնի իրավունքով):

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 11670) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովը նախագահում էր Վ. Սիրմաքեսը, իսկ ժողովի քարտուղարն էր Ա. Սելլեֆյանը:

Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2010 թվականի շահույթը բաշխելու հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

<u>Երկրորդ հարցով</u> (զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2010 թվականի ֆինանսական տարվա 952.991.000 (ինը հարյուր հիսուներկու միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից 500.000.000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ այն դարձնելով 1.000.000.000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ, իսկ մնացած 452.991.000 (չորս հարյուր հիսուներկու միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ՝ դարձնելով այն 1.172.427.000 (մեկ միլիարդ մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն չորս հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Որոշումն ուժի մեջ է մտնում 2011թ. ապրիլի 19-ից:

Նիստին այլ հարցեր չքննարկվեցին:

Սույն արձանագրությունը կազմված է 19.04.2011թ.-ին, հայերեն լեզվով, երկու օրինակից, բաղկացած է 2 (երկու) էջից:

Ժողովի նախագահ՝ *<u>ստորագրություն</u>* Վ. Սիրմաքես

Ժողովի քարտուղար՝ *<u>ստորագրություն</u>* Ա. Սելլեֆյան